ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» Հոկտեմբերի 2014թ. N 222

Ք.Արմավիր

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ,, Այլընտրանքային ծառայության մասին ,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և ,, Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին ,, Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով ,,Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 1414-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին.. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014թվականին սեպտեմբերի 4-ի N949-ն որոշումը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանին տնտեսագիտական դասակարգման <<Այլ ընթացիկ դրամաշնորհներ>> հոդվաշով նախատեսված 1650000(մեկ միլիոն վեց հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ գումարը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի քաղաքային համայնքներին՝ այլընտրանքային աշխատանքային ծառայողների դրամական բավարարման նպատակով, վերաբաշխել համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին (Փ. Կարապետյան) սահմանված կարգով իրականացնել պայմանագրի կնքումը և գումարի հատկացումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ *Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ*

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզպետի
2014 թվականի Դեկտեմբեր 14 -ի
N 222 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

հ/հ	Համայնքի անվանումը	Ընդամենը (հազար դրամ)
1	2	7
1	Ք. Արմավիր	600000
2	Ք. Էջմիածին	900000
3	Ք. Մեծամոր	150000

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Փ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ